ՄՇԱԿՈՒՅԹ



# ԹԲԻԼԻՍԻԻ ՕՊԵՐԱՆ ԲԱՑՈՒՄ Է ԻՐ ԴՌՆԵՐԸ

## ԱՅՍ ԲԵՄՈՒՄ ԵՐԳԵԼ ԵՆ ԾԱԳՈՒՄՈՎ ՀԱՅԱԶԳԻ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՐԳԻՉՆԵՐ

*Այսօր՝ հունվարի 30-ին, հնգամյա վերանորոգումից հետո, Զ.Փալիաշվիլու «Աբեսալոմ եւ էթերի» օպերայի պրեմիերայով հանդիսատեսի առջեւ իր դռներն է բացում Թբիլիսիի Զ.Փալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի պետական թատրոնը:*

*Բացմանը ուրիշ բարձրաստիճան հյուրերի թվում կլինեն նաեւ Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:*

*Մինչեւ թատրոնի հանդիսավոր բացումը, մենք զրուցեցինք օպերային մշակույթի այս երանելի կովկասյան «օրրոցին», ընդհանրապես օպերային ու երաժշտությանն իրենց կյանքը նվիրաբերող մեծանուն գործիչներ՝ Վադիմ Շուբլաձեի եւ Էլվիրա Ուզունյանի հետ:*

*Շնորհավորելով նրանց ու բոլորիս, խնդրեցինք կիսվել հիշողություններով, որոնք առնչվում են վրաց օպերային բեմին հանդես եկած իրենց ժամանակակիցների, ինչպես եւ նախորդ սերունդների օպերային արվեստի հայ ներկայացուցիչների հետ:*

***Վադիմ Շուբլաձե, պրոֆեսոր, Թբիլիսիի Զ.Փալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի թատրոնի դիրիժոր, Վրաստանի արվեստի վաստակավոր գործիչ, Մովսես Խորենացու անվան շքանշանակիր, 1967-77 թվականներին Հայաստանի հեռուստատեսության եւ ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր, կատարել ու ձայնագրել է հայ հեղինակների ավելի քան 100 երկ:***



- Հիրավի, շնորհավորում եմ բոլորիս: Օրը պատմական է, ոչ միայն իր հանդիսավորությամբ, այլեւ բովանդակությամբ, որովհետեւ օպերայի ու բալետի այս հզոր ու արքունական օջախը, այսուհետ ունենալու է այն բոլոր չափանիշներն ու հնարավորությունները, որոնք աշխարհի մեծ թատրոններին են հատուկ: Բարձրաճաշակ ու շատ շքեղ արտաքին ձեւավորմամբ չէ, որ սահմանափակվել են. հարդարանքի, ամենակարեւորը փորձասենյակներն են շրջադարձորեն վերակառուցվել, ունեն իրենց բեմը, նվագախմբային փոսը, բոլոր հարմարանքները, գործը միանգամից մեծ բեմ դուրս բերելու համար: Կովկասյան օպերայի, ասել է թե ամենաառաջին թատրոնը, անզուգական անուններ է տվել աշխարհին ու նաեւ իր գիրկն առել: Միայն այն, որ այստեղից ինչել են աշխարհի հզոր ձայներ՝ Ժան Պիրսը, ով հանճարեղ դիրիժոր Ա.Տոսկանինիի սանն էր եւ, ի դեպ «Ռիգոլետտոյում» երգել է Էլվիրա Ուզունյանի հետ: Ապա նաեւ Ռուֆֆո Տիտտան, Ադելինա Պատտին... Մի ամբողջ հանրագիտարան կարող ենք կազմել աշխարհին հայտնի այս անուններով: Ինչ վերաբերում է ծագումով թբիլիսցի հայ մեծանուններին, ապա նախ նշեմ **Նադեժդա Պապայանին (1868-1906թթ.),** ով առաջին հայ օպերային երգչուհին էր, ավելի քան 50 օպերային գլխավոր դերերգերի կատարող, հանդես է եկել Փարիզում, Անգլիայում, Իտալիայում, Ռուսաստանում, իսկ թբիլիսյան բեմում մասնավորապես է հիշվել նրա Մարգարիտան, Գունոյի «Ֆաուստից», Ֆ.Շալյապինի՝ Մեֆիստոֆելի, կատարմամբ: Ապա նաեւ **Հայկանուշ Դանելյան (1893-1958թթ.)**, ով ի դեպ, հանդես է եկել էթերիի դերում Զ.Փալիաշվիլու «Աբեսալոմ եւ էթերի» օպերայում: Նրան են ձոնվել բազմաթիվ ռոմանսներ, այդ թվում վրացի կոմպոզիտորների կողմից: Այս լեգենդար մարդկանց ես չեմ ճանաչել, բայց փոխարենը պատիվ եմ ունեցել լսել ու նվագակցել ԽՍՀՄ ժողովրդական արտիստ **Նար Հովհաննիսյանին (1913-1995թթ. բաս)**, (Նար-Դոսի որդին), ով ավարտելով Թբիլիսիի կոնսերվատորիան, տեղի օպերայի եւ բալետի թատրոնում սկզբում խմբերգիչ, ապա՝ մեներգիչ է հանդես եկել եւ, երգել գրեթե բոլոր առաջատար արիաները՝ Դոն Բազիլիո, Ռոսինիի «Սեւիլյան սափրիչից», Ցանգալա՝ Զ.Փալիաշվիլու «Դաիսիից» եւ այլն: Հայտնի անուններ են նաեւ Վրաստանի եւ Հայաստանի ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Սերգեյ Բարխուդարյանը, Ժենյա Խաչիկյանը, ում ամենափայլուն դերերգերից էր Ջ.Վերդիի «Աիդան»: Եվ վերջապես անուններից ամենահարազատը՝ Էլվիրա Ուզունյանը՝ Վրաստանի եւ Հայաստանի ժողովրդական արտիստ, Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնի մեներգչուհին, ով քանիցս հյուրախաղային ծրագրով ու աշխարհի անվանիների մասնակցությամբ հանդես է եկել իր հարազատ վրացական բեմում, կատարելով Երեւանում ներկայացրած դերերգերից թերեւս յուրաքանչյուրը: Իհարկե, հայկական ազգանուններով տաղանդավոր երգիչներ հանդես են եկել նաեւ խմբերգով, ում հետ երջանիկ օրեր եմ անցկացրել, բարեկամություն արել: Հարկ եմ համարում նշել նաեւ հայ դիրիժորներին, ովքեր հյուրախաղային ծրագրերով հանդես են եկել վրաց բեմում՝ Երեւանի օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր Սուրեն Չարեկյան, ով ի դեպ, Քութայիսիից էր, Վահրամ Կատանյան, Յակով Ոսկանով, այլք: Նշածներիցս բոլորը Վրաստանի ծնունդ են եւ նրանց բոլորի հունը հենց թբիլիսյան օպերայի դպրոցն է ու նրա բարքավանդույթները, որի պատիվն ու պատասխանատվությունը մեծապես պահում ու զգում էին ու են այդ երեւելիներից յուրաքանչյուրը:

***ԷԼՎԻՐԱ ՈՒԶՈՒՆՅԱՆ. - Հայաստանի եւ Վրաստանի ժողովրդական արտիստ, Երեւանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհի, կինոդերասանուհի: Վերջին տարիներին բնակվում է ԱՄՆ-ում, որտեղ հանդես է եկել բազմաթիվ համերգներով: Բոստոնում հիմնել եւ ղեկավարում է «Օգնենք երիտասարդ տաղանդներին» կազմակերպությունը:***

- Մենք՝ Ուզունյաններս, տոհմիկ թբիլիսցիներ ենք: Թբիլիսիի Վ.Սարաջիշվիլու անվան պետական կոնսերվատորիայի երրորդ կուրսի ուսանող էի, երբ հրավիրեցին Երեւանի օպերային թատրոն: Մինչ այդ արդեն ավարտել էի Թբիլիսիի Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետն ու երաժշտական դպրոցը: Գնացի: Բայց դա ոչինչ չէր նշանակում: Ես միեւնույնն է մնում էի երկու ժողովուրդների, երկու երկրների զավակն ու երգիչը: Երբ Երեւանում էի սրտիս մեջ Թբիլիսին էր, գալիս էի Թբիլիսի՝ հակառակն էր: Թբիլիսին սոսկ ծննդավայր չէ ինձ համար: Այստեղ եմ ես մկրտվել, օծվել ու դաստիարակվել որպես երգչուհի, այստեղ գործել իմ առաջին բեմական քայլերը (Թբիլիսիի օպերային ստուդիայի ղեկավար Պետրե Ամիրանաշվիլիի հետ) ու վստահություն, ներշնչանք եւ գնահատանք ձեռք բերել: Թբիլիսիի օպերային թատրոնում գործող մեներգչուհի երբեք չեմ եղել, բայց համարձակությամբ ասեմ, որ ես մշտապես հաշվետու եմ եղել նրա առջեւ: Իմ բոլոր դերերգերը ես բերել եմ Թբիլիսի, ներկայացրել հանդիսատեսին, վրացիներին, բեմի իմ հայրերին ու ընկերներին: Այդպես էր: Մինչեւ չէի ստանում օրհնանքն ու մկրտությունը վրաց հող ու բեմի, չէի հանգստանում:



- Թբիլիսին նույնպես հետեւում էր ինձ: Երեւանյան իմ համերգներին գալիս էին ոչ միայն երգիչներ ու կոմպոզիտորներ, այլ նույնիսկ ինստիտուտի դասախոսներ: Հիշում եմ «Դաիսիի» պրեմիերան էր Երեւանում, իմ դերերգով, բեմադրիչը Զուրաբ Անջափարիձեն էր: Եվ հանկարծ վրաց ճանաչված արվեստի գործիչների մեջ տեսա պատմական ֆակուլտետիս դեկան Արչիլ Չխեիձեին, որ պարզապես եկել էր ինձ լսելու... Հետո բոլորս գնացինք մեր տուն, թիֆլիսյան բոմոնդը երեւանյան մեր տանն էր՝ մեկը գետնին էր նստած, մյուսը պատուհանի գոգին, երրորդը բազմոցին եւ այսպես շարունակ: Կամ երկու տարի առաջ, երբ Երեւանում մեծ շուքով տոնեցինք իմ 80-ամյակը եւ թբիլիսյան օպերային թատրոնից հյուրեր եկան՝ երգիչներ, պարողներ, իմ համակուրսեցիներ, կոմպոզիտորներ Վադիմ Շուբլաձեն, Վաժա Ազարաշվիլին... Դուք չեք պատկերացնի, ինչ հոտնկայս ծափահարություններով նրանց դիմավորեց հայ հանդիսատեսը: Այդպես է, մենք ձգում ենք միմյանց, սա է մեր հարստությունը՝ այդ կապերը, այդ սերը: Մենք չենք կարող կորցնել այդ ամենը, պարզապես չի կարելի:

- Այդ է պատճառը, որ երբ ականջիս մեր բարեկամությունը խաթարող լուրեր են հասնում, ես ինձ տեղ չեմ գտնում, որովհետեւ դա չեն պատգամել մեզ մեր նախնիները: Հիշում եմ, թե ինչպիսի ընդունելության էի արժանանում ոչ միայն ես, այլեւ Հայաստանի օպերային երգիչները՝ Արշավիր Կարապետյանը (բարիտոն, որի կինն, ի դեպ բանաստեղծ Է.Ջեդգենիձեի դուստրն էր), նրա հետ ներկայացանք «Դաիսիում» եւ Զուրաբ Անջափարիձեն հիացել էր: Ինչպես էր վրաց հանդիսատեսն ընդունում լեգենդար Գոհար Գասպարյանին, Երեւանյան օպերային թատրոնի ներկայիս գեղ.ղեկավար Գեղամ Գրիգորյանին: Հիշում եմ, Թբիլիսիում մեծ այցետոմս ստացավ նաեւ Ռումինիայի վաստակավոր արտիստ, նշանավոր բարիտոն Դավիթ Հովհաննիսյանը, որի հետ մեկ տարի անց մենք երգեցինք «Ռիգոլետտո», Երեւանում:

- Այս էջերից յուրաքանչյուրը ես սրբությամբ եմ պահում, թե հիշողությանս եւ թե ձայնագրությունների ու տեսագրությունների տեսքով, ուր վրաց նշանավորները խոսում են ինչպես իմ, այնպես էլ օպերայի մյուս հայ երեւելիների մասին: ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Օթար Թաքթաքիշվիլին, այդ տարիների Մշակույթի նախարարը, հենց ինքն էր ասում, որ Էլվիրա Ուզունյանն աշխատում է երկու թատրոնների միջեւ, այնտեղ բեմադրվում, այստեղ երգում է եւ՝ հակառակը: Կամ Վրաստանի ժողովրդական արտիստ Նոդար Անդղուլաձեն, ում հետ հանդես եկանք «Դոն Ժուանում», սոպրանո Մեդեա Ամիրանաշվիլին, նրանք ոչ միայն մեր գործընկերներն էին, այլեւ բարեկամները: Մենք ընկերություն էինք անում ոչ միայն արվեստում, այլեւ կենցաղում ու երբեք չէինք դավաճանել այդ ընկերությանը: Թբիլիսցիների համար ես անզուգական Անուշ էի, նրանք հեռուստահաղորդումներ էին պատրաստում, հատուկ դեկորացիա տեղադրում, որպեսզի Անուշ երգեմ...

- Հիմա ես անհամբեր սպասում եմ իմ հին ու նոր թատրոնի հետ հանդիպմանը: Երբ երկու տարի առաջ Թբիլիսում էի, տեսա, թե ինչպես են բերում վարագույրը, որ վերականգնվել է համաձայն նշանավոր նկարիչ Սերգո Կոբուլաձեի օրիգինալ էսքիզի, արված դեռ 1960 թվականին:

- Ջերմորեն, ամենաբարի ցանկություններով, ես շնորհավորում եմ մասնավորապես իմ սիրելի վրացիներին եւ օպերային մոտ կանգնած յուրաքանչյուրին, որովհետեւ աշխարհասփյուռ շատերի համար այն իսկապես յուրովի կրթօջախ է: Բարով վայելենք, հավատարիմ մնանք բարի այն ավանդույթներին, որոնք ծնվել են, սերնդե-սերունդ փոխանցվել ու միայն բարուն ծառայել, Թբիլիսին, նրա յուրաքանչյուր օջախը այլ կերպ ապրելու պարզապես իրավունք չունեն:

***ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ***


Նադեժդա Պապայան


Նար Հովհաննիսյան


Հայկանուշ Դանելյան


Սուրեն Չարեկյան


Սարգիս Բարխուդարյան

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ✵ ²ÚÈ²½²Ü ✵ ÊàÐÐàôð¸Üºð

²ÜÐ²ì²Ü²Î²Ü ö²êî

# ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒՂԵՂԻ ԲԱՑԱՌԻԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



***Գիտնականները պնդում են, որ սովորաբար մարդն օգտագործում է ուղեղի հնարավորությունների մի քանի տոկոսը: Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը եւ, ընդհանրապես, հնարավո՞ր է, արդյոք, թեկուզ մոտավորապես պատկերացում կազմել մարդկային ուղեղի հնարավորությունների մասին:***

***Վ.Վարդանյան***

***Բաթումի***

Ամերիկյան Սալկա ինստիտուտի նեյրոֆիզիոլոգների հաշվարկների համաձայն, մարդու ուղեղը կարող է իր մեջ մոտավորապես տասն անգամ ավելի շատ տեղեկատվություն տեղավորել, քան ավելի վաղ համարվում էր: Խոսքը վերաբերում է մի քանի պետաբայթ տվյալների, ինչը պետք է բավականացնի Համացանցի գրեթե ողջ ընթացիկ կոնտենտը տեղավորելու համար: Այդ մասին ասված է e Life հանդեսում հրապարակված հոդվածում:

«Դա իսկական ռումբ է նեյրոֆիզիոլոգիայի համար: Մենք գտել ենք այն բանը հասկանալու բանալին, թե ինչպես են աշխատում հիպոկամպի` հիշողության կենտրոնի նեյրոնները, թե ինչպես է դրանց հաջողվում էներգասպառման ցածր մակարդակը զուգակցել բարձր արտադրողականության հետ: Ամենապահպանողական գնահատումներով, մեր հիշողության տարողությունը մոտավորապես 10 անգամ ավելի մեծ է, քան մենք ավելի վաղ կարծում էինք, եւ նրա ծավալը կազմում է մոտավորապես մեկ պետաբայթ, ինչը համադրելի է ողջ գլոբալ սարդոստայնի չափերի հետ»,-հայտարարել է Թերի Սեջնովսկին` Լա-Հոյեի (ԱՄՆ) Սալկայի ինստիտուտի աշխատակիցը:

Ðºî²øðøÆð ìÆÖ²Î²¶ðàÂÚàôÜ

# 2015-Ը` ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՏԱՔ ՏԱՐԻ



***Լսել եմ, որ գիտական տարբեր կենտրոններում կլիմայական փոփոխությունների հաշվարկներ են կատարվում: Հետաքրքիր է, հաշվի առնելով անցյալ տարվա բնական անոմալ երեւույթները, ի՞նչ եզրակացության են հանգել գիտնականները:***

***Ա.Սերոբյան***

***Թբիլիսի***

Եզրակացությունը ավելի քան հետաքրքիր է: 2015 թվականն ամենատաքն է եղել օդերեւութաբանական դիտարկումների պատմության մեջ: Այդ մասին ասված է NASA-ի եւ Օվկիանոսային ու մթնոլորտային հետազոտությունների ազգային վարչության ուսումնասիրության մեջ:

Հետազոտության տվյալներով` մոլորակի վրա օդի միջին ջերմաստիճանն անցյալ տարի կազմել է ըստ Ցելսիուսի շուրջ 15 աստիճան, ինչը մոտավորապես 0,2 աստիճանով բարձր է, քան 2014 թվականի ցուցանիշը:

Զեկույցի համաձայն` 2015 թվականին օդի ջերմաստիճանը 0,9 աստիճանով բարձր է եղել ամբողջ XX դարի տարեկան միջին ջերմաստիճանից:

Գիտնականները ենթադրում են, որ ջերմաստիճանի բարձրացումը կապված է էլ Նինյո ֆենոմենի եւ մթնոլորտ ջերմոցային գազի արտանետումների ավելացման հետ:

Անցյալ տարվա հունվարին գիտնականները 2014 թվականը ամենատաքն էին ճանաչել օդերեւութաբանական դիտարկումների ողջ պատմության մեջ` նշելով, որ գլոբալ ջերմաստիճանը Ցելսիուսի 0,68 աստիճանով գերազանցել է միջին ցուցանիշները:

Այս տվյալները հավաքվում են 1880 թվականից: Դիտարկումների պատմության ընթացքում 15 ամենատաք տարիներից 14-ը բաժին են ընկնում XXI դարին:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ

# ԿԱՐԵՎՈՐ ՄԹԵՐՔՆԵՐ ԱՌՈՒՅԳ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սննդի մեջ ներառեք ցիտրուսային մրգեր, բրոկոլի, քաղցր տաքդեղ, հաղարջ, մասուր: Այս մթերքները C վիտամինի շտեմարան են: C վիտամինի օգնականներն են բիոֆլանոիդային նյութերը, որոնք կան կանաչ թեյի, կարմիր գինու, խնձորի, սոխի, լոլիկի, բրոկոլիի մեջ: Ամեն օր կես բաժակ նարնջի թարմ քամած հյութը կբավարարի օրգանիզմին անհրաժեշտ C վիտամինի պահանջը: Կամ կարելի է օրական 2 կիվի ուտել:

C վիտամինն օրգանիզմից դուրս է գալիս մեկ օրվա ընթացքում: Այդ պատճառով էլ այն պետք է ամեն օր ընդունել:

Հիշեք. խոլեստերինը բազմաթիվ հորմոնների բաղադրիչ է, նա նաեւ մասնակցում է արյունատար անոթների պատերի կառուցմանը, հետեւաբար ոչ մեծ քանակով, բայց անհրաժեշտ է եւ նույնիսկ շատ օգտակար: Խոլեստերինով օրգանիզմը «հաջող» մատակարարելու համար ամեն օր պետք է 15-20 գ կարագ ուտել:

ԱՌՕՐՅԱ ՀԱՐՑԵՐ

# ԻՆՉՊԵՍ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

(Սկիզբը` նախորդ համարում)

***Ինչպե՞ս բաշխել գումարը ընտանեկան ծախսերի համար.***

Գոյություն ունի ընտանեկան ծախսերի համար գումարը բաշխելու երկու հիմնական մոտեցում: Առաջին դեպքում ամուսինն ու կինը (եթե կինն էլ է աշխատում) իրենց աշխատավարձը դնում են մեկ ընդհանուր «դրամարկղի» մեջ եւ ամսվա ընթացքում այնտեղից գումար վերցնում թե' ընտանեկան, թե' անձնական ծախսերի համար: Այս մեթոդը կատարյալ է շատ համերաշխ ընտանեկան զույգերի համար, հատկապես, եթե նրանց բախտը բերել է ընդհանուր հետաքրքրությունների հարցում:



Երկրորդ մոտեցումը ենթադրում է ամուսիններից ամեն մեկի եկամտի բաժանում երկու մասի` ընտանեկան եւ անձնական ծախսերի: Առաջինը ներառում է գումար կոմունալ վարձերի, սննդի, անհրաժեշտ կենցաղային, տնտեսական եւ այլ իրերի համար: Ինչի վրա ծախսել եկամտի անձնական մասը` որոշում է ամեն մեկն իր հայեցողությամբ:

Եվս մի տարբերակ այն դեպքերի համար, երբ ամուսիններից մեկը զգալիորեն շատ է ստանում մյուսից: Այս դեպքում նա ամբողջությամբ իր վրա է վերցնում ընտանեկան խոշոր ծախսերը: Ճիշտ է, այս տարբերակը տարածվում է միայն կանանց վրա, քանի որ հազվադեպ է լինում, որ մեզանում կանայք տղամարդկանցից ավելի շատ վաստակեն:

***Կարեւոր խորհուրդներ.***

Ամենօրյա ծախսերը վերահսկելու համար հստակեցրեք ամսվա ծախսվելիք գումարը եւ բաժանեք այն ըստ օրերի: Այսպես դուք կստանաք այն գումարը, որն ազատորեն կարող եք ծախսել օրվա ընթացքում: Իսկ եթե օրվա կտրվածքով գերազանցել եք նախատեսված գումարը, մյուս օրը մի քիչ «նեղեք» ձեզ. անհրաժեշտ է պահպանել հավասարակշռությունը:

Երբեք մի' ձգտեք խնայել բացարձակ ամեն ինչի վրա, դա ոչ մի լավ բանի չի հանգեցնի: Կան բաներ, որոնց վրա խնայել չի կարելի` լիարժեք սնունդ, հանգիստ, կրթություն... Իհարկե, սա քաղաքակիրթ տարբերակում: Ցավոք, մեր երկրի կենսամակարդակը հեռու է բավարար լինելուց: Այնուամենայնիվ...

Ժամանակ առ ժամանակ վերլուծեք ձեր ընտանեկան ծախսերը. մի գուցե որոշ կետեր պետք է հանել եւ ավելացնել նորերը: Երբեմն ընտանեկան բյուջեին հետեւելով` հասկանում ես, որ կան բաներ, առանց որոնց էլ կարելի է հանգիստ ապրել, օրինակ` չափից շատ քաղցրեղենի գնումը կամ ինտերնետի թանկ կապը (երբ ավելի էժան տարբերակն էլ կբավարարի պահանջները): Այսպիսով` դուք համապատասխան խմբագրումներ կմտցնեք բյուջեում` ավելի կազմակերպված դարձնելով այն:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

# ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՄՈԼՈՐԱԿԸ

Կալիֆոռնիայի Տեխնոլոգիական ինստիտուտի գիտնականներ Մայքլ Բրաունը եւ Կոնստանտին Բագիտինը հանգել են այն եզրակացության, որ Արեգակնային համակարգում, հավանաբար, գոյություն ունի իններորդ մոլորակը, որի զանգվածը 10 անգամ գերազանցում է Երկրի զանգվածը: Հետազոտողների կարծիքով` մոլորակը գտնվում է Երկրից մոտավորապես 20 անգամ ավելի հեռու, քան Նեպտունի ուղեծիրը:

Գիտնականները մոլորակը համարել են գազային հսկա, որը կարող է նետված լինել «հեռավոր տիեզերք»` Արեգակնային համակարգի ծայրամաս, իսկ դրա պատճառը Յուպիտերի եւ Սատուռնի ձգողականության ուժերն են:



Բացի այդ, հետազոտության հեղինակները ենթադրում են, որ առաջիկա հինգ տարվա ընթացքում աստղագետները կկարողանան «նոր» մոլորակը տեսնել աստղադիտակի միջոցով, սակայն արդի օպտիկական տեխնիկան թույլ չի տալիս դա անել:

# ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ստեղծագործական ոգեւորությունը աշխատանքի ընթացքում է առաջանում ճիշտ այնպես, ինչպես եւ հուսահատությունը:

***Մարտիրոս Սարյան***
***(1880-1972)***
***Հայ մեծ նկարիչ***

Ժամանակը գալիս եւ մեզ իմաստությամբ է համակում:

***ԱԼԵՔՍԱՆԴՐ ՃԱՎՃԱՎԱՁԵ***
***(1786-1846)***
***Վրաց բանաստեղծ***

Մարդը երբեք այնքան դժբախտ չի լինում, որքան թվում է, եւ երբեք այնքան երջանիկ չի լինում, որքան ուզում է:

***Օտտո ֆոն Բիսմարկ***
***(1815-1898)***
***Գերմանացի քաղաքական գործիչ***

Մարդկանց իմաստությունը համեմատական է ոչ թե նրանց փորձին, այլ այն ձեռք բերելու նրանց ընդունակությանը:

***Ջորջ Բեռնարդ Շոու***
***(1856-1950)***
***Անգլիացի դրամատուրգ***

Բացատրվել կարելի է նրանց հետ, ովքեր խոսում են ուրիշ լեզվով, միայն ոչ նրանց հետ, ովքեր նույն բառերի մեջ բոլորովին այլ իմաստ են դնում:

***Էդմոն Ռոստան***
***(1868-1918)***
***Ֆրանսիացի պոետ***

Մի վարվիր ուրիշների հետ այնպես, ինչպես չէիր ցանկանա, որ քեզ հետ վարվեին ուրիշները:

***ՈՍԿԵ ԿԱՆՈՆ***

Ծերերի խրատները նման են ձմեռային արեւին` նրանք լուսավորում են, սակայն չեն տաքացնում:

***Վազգեն Ղարիբյան***
***«Վրաստանի» ընթերցող***

² Ü º Î ¸ à î Ü º ð

* Հրեային hարցնում են.

\- Ի՞նչ ես անում:

\- Բրայլյան այբուբենն եմ սովորում:

\- Տեսողության խնդիր ունե՞ս:

\- Չէ, բայց էդպես առանց լույսը վառելու կկարողանամ կարդալ...

* Խմիչքից «ճաքած» զույգը բարձր արագությամբ սլանում է մայրուղով:

\- Հենց կամրջից թեքվես, կկանգնես,- ասում է ամուսինը:

\- Ոնց թե կկանգնես, ես էլ գիտեի, թե մեքենան դու ես վարում...

* Երեկ տեսա, թե ոնց են երեք հոգով մեկին ծեծում, ու որոշեցի օգնել.

\- Օգնեցի՞ր:

\- Հա՛: Մենակ տեսնեիր, թե չորսով դրան ինչ օրը գցեցինք...

* Գժանոցի պատին մեքենայի նկար կա, բոլոր գժերը փորձում են մեքենայի դուռը բացել, իսկ մի գիժ հեռու նստած ծիծաղում է: Բժիշկները հարցնում են.

\- Ինչո՞ւ ես ծիծաղում:

Ասում է.

\- Սրանք ուզում են դուռը բացեն, բայց չգիտեն, որ բանալին իմ մոտ է:

* Կինը` ամուսնուն.

\- Սիրելի՜ս, ես քեզ ասել եմ չէ, որ դու ամենալավն ես:

\- Չէ, չես ասել:

\- Աստվա'ծ իմ, տեսնես ում էի երեկ դա ասում...

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԵՄ-Ի ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՎԱԾ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

*Հունվարի 27-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Հարավային Կովկասի ու Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Հերբերտ Զալբերի հետ:*



Հանդիպմանը Սերժ Սարգսյանը կարեւորել է ԼՂ հիմնախնդրի լուծման հարցում ԵՄ հավասարակշռված դիրքորոշման պահպանումը եւ խնդրի համապարփակ կարգավորման համար բարենպաստ մթնոլորտ ստեղծելու հանձնառության իրականացումը:

ԵՄ հատուկ ներկայացուցիչը վստահեցրել է, որ Միությունը շահագրգռված է հիմնախնդրի շուտափույթ ու խաղաղ կարգավորմամբ եւ ցանկանում է իր հնարավորությունների սահմաններում նպաստել հիմնախնդրի լուծմանը՝ աջակցելով այդ հարցով զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ջանքերին, որը միակ համաձայնեցված եւ ընդունելի ձեւաչափն է:

Հանդիպմանը զրուցակիցները անդրադարձան ԵԱՀԿ Մինսկի շրջանակներում ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացի վերջին զարգացումներին, առկա իրավիճակին եւ գործընթացում առաջընթաց արձանագրելու հնարավորություններին:

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

*Հունվարի 27-ին Հայաստանի նախագահ, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) հավաքական անվտանգության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժային:*

ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը նախագահ Սերժ Սարգսյանի հետ քննարկել է Կազմակերպության առջեւ ծառացած արդիական հարցեր, ինչպես նաեւ նրա հաստատմանը ներկայացրել ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի սեպտեմբերյան եւ դեկտեմբերյան նստաշրջանների ընթացքում կայացված որոշումների ու Կազմակերպությունում նախագահության շրջանում Հայաստանի Հանրապետության առաջարկած առաջնայնությունների իրագործմանն ուղղված միջոցառումների ծրագիրը:

## ԳՐԻՊՈՎ ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵԼ Է 40 ՏՈԿՈՍՈՎ




*ՀՀ կրթության եւ գիտության, ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունների, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի եւ Երեւանի շտապօգնության ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ, ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանի գլխավորությամբ հրավիրվել է արագ արձագանքման խմբի հերթական խորհրդակցությունը:*

Հանդիպմանը նախարարը նշեց, որ վերջին տասնօրյակի ընթացքում դիտվում է հիվանդացության եւ դիմելիության զգալի նվազում՝ շուրջ 40 տոկոսով: Նվազել է նաեւ շտապօգնության կանչերի թիվը՝ սուր շնչառական վարակներով պայմանավորված: Դիմելիության զգալի իջեցում է արձանագրվել նաեւ բուժօգնության առաջնային օղակում:

Փետրվարի 1-ից ուսումնական գործընթացն սկսելու կապակցությամբ հանգամանալից քննարկվել են հանրակրթական, նախնական եւ միջին մասնագիտական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների պատրաստվածության մակարդակը:

Հիմք ընդունելով ներկայացված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու հրահանգը՝ Արմեն Մուրադյանը հանձնարարել է նախարարության համապատասխան ստորաբաժանումներին պատասխանատու գերատեսչություններ հետ իրականացնել ուսումնական հաստատությունների պատրաստվածության մակարդակի մշտադիտարկում:

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՃԵԼ Է

*Հայաստանում աճել է նախադպրոցական հաստատությունների թիվը: Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ 2012-ին Հայաստանում եղել է 683, 2013-ին՝ 697, 2014-ին՝ 713 նախադպրոցական հաստատություն:*



Աճել է նաեւ նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվը. 2012-ին նմանատիպ հաստատություններ հաճախել է 69,5, 2013-ին՝ 68,9, 2014-ին՝ 72,7 հազար երեխա:

Հայաստանում ավելացել է հանրակրթական դպրոցների քանակը: 2012-ին Հայաստանում եղել է 1435, 2013-ին՝ 1434, 2014-ին՝ 1437 դպրոց:

Փոքր-ինչ նվազել է հանրակրթական դպրոցներում սովորողների թվաքանակը: 2012 թվականի տվյալներով, հանրակրթական դպրոցներում սովորել է 368,7, 2013-ին՝ 360,4, 2014-ին՝ 359,6 հազար դպրոցական:

Փոքր-ինչ նվազել է ուսուցիչների թվաքանակը հանրակրթական դպրոցներում. 2012-ին հաստատություններում աշխատել է 40,8, 2013-ին՝ 39,8, 2014-ին՝ 39 հազար ուսուցիչ:

Նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների թվաքանակի առումով էլ էական փոփոխություններ չկան. ավելացել է սովորողների թիվը: 2012-ին նմանատիպ ուսումնական հաստատություններում կրթություն են ստացել 6,8, 2013-ին՝ 7,4, 2014-ին՝ 7,3 հազար մարդ:

Բուհերի թիվը 2014 թվականի տվյալներով, նվազել է 3-ով՝ հասնելով 62-ի: Վերջին տարիներին նվազել է նաեւ դիմորդների թիվը:

2012-ին բարձրագույն ուսումնական հաստատություն է ընդունվել 21,3, 2013-ին՝ 19, իսկ 2014-ին՝ 17,5 հազար դիմորդ: Նվազել է նաեւ շրջանավարտների թիվը:

Փոխարենն աճել է օտարերկրյա ուսանողների թիվը: 2012-ին հանրապետության բուհերում սովորել է 2725, 2013-ին՝ 3655, իսկ 2014-ին՝ 3647 օտարերկրյա ուսանող:

## ՎԱԼԵՐԻ ՊԵՐՄՅԱԿՈՎԻ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

*ՌԴ 102-րդ ռազմաբազայում հունվարի 29-ին շարունակվեց Գյումրիում Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության մեջ մեղադրվող Վալերի Պերմյակովի գործով արտագնա դատական նիստը՝ նախագահությամբ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Հարություն Մովսիսյանի: Ընթացքի մեջ է դատական գործընթացի դատաքննական փուլը:*

Նախորդ՝ դեկտեմբերի 22-ին մեկնարկած դատական նիստը հետաձգվեց, քանի որ սպանված Ավետիսյանների դուստրերը՝ Լուսինե Ավետիսյանը, Անահիտ Կոշտոյանը եւ փեսան՝ Եգոր Ադամյանը, հոգեբանորեն պատրաստ չէին խոսելու: Դատական նիստը բավական զգացմունքային էր եւ պարբերաբար ընդմիջվում էր հարազատների ինքնազգացողության վատացման պատճառով: Շտապօգնության աշխատակիցները չէին լքում դահլիճը:

Հիշեցնենք, որ Ավետիսյանների ընտանիքի 6 անդամների սպանությունը տեղի է ունեցել 2015 թվականի հունվարի12-ին, վաղ առավոտյան, նրանց մահը վրա է հասել հրազենային վնասվածքներից: Ավետիսյանների ընտանիքից ողջ էր մնացել 6 ամսական փոքրիկը՝ Սերյոժա Արմենի Ավետիսյանը, ով կտրող-ծակող գործիքից ստացած վնասվածքներով տեղափոխվել էր բժշկական կենտրոն, այնուհետեւ՝ յոթ օր հետո մահացել:

### ԿԱՐԵՎՈՐՎԵՑԻՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՋԱՆՔԵՐԸ

***Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հեռախոսազրույց է ունեցել Իրանի նախագահ Հասան Ռոհանիի հետ:***

***Սերժ Սարգսյանը եւ Հասան Ռոհանին քննարկել են հայ-իրանական բարեկամական հարաբերություններին եւ համագործակցությանը վերաբերող, ինչպես նաեւ միջազգային եւ տարածաշրջանային օրակարգի մի շարք արդիական հարցեր: Հեռախոսազրույցի ընթացքում համաձայնեցվել են առաջիկա հանդիպումների ծրագրերը:***

### ՄՈՎՍԵՍ ԱԲԵԼՅԱՆԸ՝ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ



***ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը հայտարարություն է արել Մովսես Աբելյանին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի եւ կոնֆերանսների կառավարման վարչության հարցերով գլխավոր քարտուղարի օգնական նշանակելու մասին:***

***Մ.Աբելյանն ունի խաղաղության, անվտանգության, հակամարտությունների կարգավորման բնագավառներում գործունեության 25-ամյա փորձ, ղեկավարել է Գլխավոր ասամբլեայի, Անվտանգության խորհրդի եւ ծրագրերի ու հիմնադրամների Գործադիր խորհուրդների շրջանակներում մի շարք գործընթացներ: Դիվանագիտական ծառայությանն անցնելուց առաջ դասախոսել է Երեւանի պետական համալսարանում: Ամուսնացած է, ունի երկու որդի: Մ.Աբելյանը եւ իր ընտանիքի անդամները Հայաստանի եւ Վրաստանի քաղաքացիներ են:***

### ՀԵՐՄԻՆԵ ՆԱՂԴԱԼՅԱՆԸ՝ ԵԽԽՎ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ



***Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հայաստանյան պատվիրակության ղեկավար Հերմինե Նաղդալյանն ընտրվել է վեհաժողովի փոխնախագահի պաշտոնում: Հերմինե Նաղդալյանն այս պաշտոնը կզբաղեցնի մինչեւ հաջորդ նստաշրջան: Նաղդալյանից բացի, ԵԽԽՎ փոխնախագահի պաշտոնում ընտրվել է եւս 19 պատվիրակ: ԵԽԽՎ փոխնախագահի պաշտոնում ընտրվել են Լեհաստանի, Գերմանիայի, Միացյալ Թագավորության, Իտալիայի, Ֆինլանդիայի, Վրաստանի, Դանիայի, Թուրքիայի, Անդորրայի, Հայաստանի, Հունգարիայի, Մակեդոնիայի, Նիդերլանդների, Ֆրանսիայի, Նորվեգիայի պատվիրակությունների ներկայացուցիչներ:***

### ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՎԻՐԱՀԱՏԵԼ ԵՆ



***Հունվարի 15-ին Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ԱՄՆ Գլենդել քաղաքի Glendale Memorial հիվանդանոցում ենթարկվել է աղիքային քաղցկեղի վիրահատության: Վիրահատությունը կատարել են հայտնի բժիշկները: Ետվիրահատական բուժումից հետո Տեր-Պետրոսյանը 24-ին դուրս է գրվել հիվանդանոցից եւ այժմ ապաքինումը շարունակում է ազգականների տանը:***

***Տեր-Պետրոսյանն ու իր ընտանիքը խորին շնորհակալություն են հայտնում բուժող բժիշկներին, հիվանդանոցի ողջ բժշկական անձնակազմին՝ նրանց կողմից ցուցաբերված պրոֆեսիոնալ բժշկական օգնության, հատուկ խնամքի եւ ջերմ մարդկային վերաբերմունքի համար:***

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ 2016

# ՕԳՏՎԵՔ ՀԱՄԱՆԵՐՈՒՄԻՑ ԵՎ ԱԶԱՏՎԵՔ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ

საქართველოს იუსტიციის სამინისტრო

Եթե դուք տարբեր պատճառներով կեղծել եք անձնական վկայականը, կացության վկայականը, անձնագիրը, ճանապարհորդական փաստաթուղթը, քաղաքացիական ակտի գրանցումը, ծննդյան վկայականը կամ/եւ այլ քաղաքացիական ակտի գրանցման վկայականը, ժամանակին դիմեք արդարադատության տներ, հասարակական կենտրոններ կամ պետական սպասարկումների զարգացման գործակալության տարածքային ծառայություններ:

Հայտարարեք փաստաթղթի կեղծման վերաբերյալ եւ ազատվեք քրեական պատասխանատվությունից:

Այն դեպքում, եթե դուք ունեք փախստականի կեղծված վկայական, նույն ժամկետում պետք է դիմում ներկայացնեք Վրաստանի բռնազավթված տարածքներից հարկադիր տեղահանված անձանց, վերաբնակեցման եւ փախստականների նախարարություն:

Համաներումը վերաբերվում է այն անձանց, ովքեր վերոնշյալ փաստաթղթերը կեղծել են մինչեւ 2009 թվականի հունվարի 1-ը, նաեւ՝ այն անձանց, ովքեր կեղծված փաստաթղթերը կամ/եւ տվյալները օգտագործել են մինչեւ համաներման օրենքի կիրառումը եւ, ովքեր իրենց նախաձեռնությամբ հայտարարում են դրա մասին:

Բացի դրանից, համաներման պայմաններից օգտվելու պահանջով դիմում կարելի է ներկայացնել համացանցի միջոցով, այդ դեպքում արտասահմանում գտնվող Վրաստանի քաղաքացիները հնարավորություն ունեն, կապվել պետական սպասարկումների զարգացման գործակալության հեռակա սպասարկումների ծառայությանը հետեւյալ համարով. (+95532) 2401010 կամ օգտվել կայքից: http://www.sda.gov.ge

*ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

ՏՐԱՆՍՊՈՐՏ

# ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ

Վրաստանի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է թեթեւ մարդատար ավտոմեքենաների համար՝ անվաշղթաների կիրառման դեպքում:

Բոլոր տեսակի ավտոտրանսպորտի երթեւեկությունը եղանակային բարդ պայմանների (ուժեղ քամի, բուք, մառախուղ) արգելված է Կոդա-Փարցխիսի-Մանգլիսի-Ծալկա-Նինոծմինդա ավտոմոբիլային ճանապարհի լեռնանցքային (Նարդեւան-Ռոդիոնովկա (Փարվանա) ճանապարհի 94-110 կմ) հատվածում արգելված է:



Իսկ Հայաստանի տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունը տեղեկացնում է, որ Հայաստանի տարածքում այլ ճանապարհների թվում դժվարանցանելի է Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհը:

Նշենք, որ այս ձմռանը աննախընթաց ցրտեր են գրանցվել ողջ տարածաշրջանում: Այսպես, Վանի Չալդըրան շրջանում օդի ջերմաստիճանն իջել է մինչեւ-41,2 աստիճան, նաեւ ձյան աննախադեպ տեղումներ են գրանցվել: Մինչ այս, Թուրքիայի պատմության ամենացածր ջերմաստիճանը գրանցվել էր 1990 թվականին. այդ ժամանակ գրանցվել էր -46,4 աստիճան:

Ի դեպ, Վանում փողոցները մաքրելու համար սկսել են օգտագործել Վանա լճի աղի ջուրը:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

# «ՔԱՐԹԼԻԻ ԹԱԳՈՒՀԻ ՇՈՒՇԱՆԻԿԸ»՝ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐ

*Մայրաքաղաքի՝ Էլենե Ախվլեդիանու անվան մանկական նկարների պատկերասրահում հունվարի 22-ին աշխույժ իրարանցում էր:*



Այդ օրը պատկերասրահի 30 պատանի նկարիչների նվիրվեց Երեւանում «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի նախաձեռնությամբ լույս տեսած «Քարթլիի թագուհի Շուշանիկը» գիրքալբոմը, որը նվիրված է Թբիլիսիի հայկական Սուրբ Գեւորգ եկեղեցու վերաբացմանը (2015թ.): «Շուշանիկը...» հրատարակվել է՝ նույն նպատակին նվիրված «Surb Gevorg Cathedral. որմնանկարներ» եւ «Սայաթ-Նովա. քնարերգություն» գրքերի հետ մեկտեղ:

Միջնադարի վրաց հեղինակ Իակոբ Ցուրտավելու ստեղծած «Քարթլիի թագուհի Շուշանիկը» իր մեջ ամփոփում է թբիլիսցի հայ եւ վրացի պատանի նկարիչների՝ պատմական հայտնի թեմային՝ 5-րդ դարի հայ սպարապետ Վարդան Մամիկոնյանի դստեր՝ քրիստոնեական հավատքի համար զոհված Շուշանիկի գեղարվեստական կերպարը վեր հանող գործեր, որոնք, ըստ մասնագետների, հյուսված են մանկական անկեղծ ու համարձակ երեւակայությամբ...

Պատանի նկարիչներն անթաքույց ուրախությամբ ու զարմանալի արժանապատվությամբ ընդունեցին նվերները եւ, կարծում ենք, չեն մոռանա նաեւ՝ պատմականորեն մեզ հասած ուսանելի փաստը վեր հանող գրքի մասին գնահատականներն ու իրենց հասցեագրված պատգամները...

Շնորհավորելով ներկաներին՝ Պատկերասրահի տնօրեն Լիա Գորգաձեն մասնավորապես նշեց, որ շատ կարեւոր է գիտակցելը՝ երկու մերձավոր ժողովուրդների ավանդական փոխհարաբերությունների մասին պատմող, պատմական փաստի հիման վրա ստեղծված այս գրքի իմաստը,- կարդացեք, սովորեք եւ խորհեք...

Դեռահաս ստեղծագործողներին շնորհավորանքի խոսք հղեցին արվեստագիտության դոկտոր Գիորգի Խոշտարիան, Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վիրահայոց թեմի մամլո խոսնակ Սուսաննա Խաչատրյանը, Պատկերասրահի՝ կրթական բաժնի վարիչ Մարինա Թաբորիձեն:

Միջոցառմանը ներկա էին գեղագիտական դաստիարակության դպրոցների ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*



# ԽԱՉԲԱՌ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 3.Գրականության այլաբանական ժանր: 9.Վրաց երգչուհի ... Բրեգվաձե: 10.Երաժշտական ձայնանիշի կես տոնով բարձրացնող նշան: 11.Քաղաքական ահաբեկման քաղաքականություն: 12.Հայ պատմիչ: 13.Հնագույն զենք եւ գործիք: 15.Որեւէ բանի փոքր քանակություն հետազոտման համար: 17.Քիմիական տարր, իներտ գազ: 19.Հայկական ազգային կերակուր: 21.Մթնոլորտային երեւույթ: 24.Հին հույն փիլիսոփա, Միլեթյան դպրոցի հիմնադիրը: 26.Խոշոր, հոյաշեն եկեղեցի: 27.Մանկական վարակիչ հիվանդություն: 28.Հին հունական քաղաքների կենտրոնական ամրացված մասը: 29.Միջնորդություն անող: 31.Հսկա օձ: 33.Քուվեյթի դրամական միավոր: 34.Քաղաք Իսպանիայում: 36.Հին իտալական ոսկեդրամ: 37.Անապատային ծառանման բույս: 40.Այլաբանական կարճ խոսք: 43.Հայ բանաստեղծ: 45.Տոհմական կալվածատեր իշխան: 46.Զինվորական երկար վերարկու: 47.Կարտոֆիլի մեջ մեծ քանակությամբ պարունակող օրգանական նյութ: 48.Գետ Արեւմտյան Վրաստանում: 49.Գործնական պարապմունք բուհում:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Երկրամաս Վրաստանում: 2.Հեղուկի ծավալի չափման մավոր: 3.Ուսուցման կազմակերպման ձեւ: 4.Վրացական մանկական ամսագիր: 5.Գործող անձ Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունում: 6.Հինդուիզմի աստվածներից: 7.Քաղաք Եմենում: 8.Եզնազգիների ընտանիքի սապատավոր ցուլ: 14.Սարդակերպերի դասի անողնաշարավոր կենդանի: 16.Լեռնագագաթ Պատմական Հայաստանում, Սասունում: 18.Թերակղզի Եվրոպայում: 19.Մ.Գորկու պիեսը: 20.Բարձրաստիճան զորահրամանատար Հին Հունաստանում: 22.Անգլիացի ֆիզիկոս, կլասիկ էլեկտրոդինամիկայի տեսության հիմնադիրը: 23.Որեւէ բան պահպանող: 24.Էլեկտրաունակության միավոր ՍԻ համակարգում: 25.Մրգատու ծառի պտուղ: 30.Շքեղ ամառանոց: 32.Հայ գուսան: 35.Լրագրողների հետ կազմակերպված հանդիպում: 36.Մսատու եւ մորթատու ճագարների տեսակ: 38.Գարնանային տարբեր գույների ծաղիկներով գեղեցիկ բույս: 39.Երկարության չափման հին ռուսական միավոր: 41.Բնորոշ ժառանգական հատկություններով առանձնացող մարդկանց խումբ: 42.Խիտ, թավուտ անտառ: 43.Կղզի Տիրենյան ծովում, Նապոլեոնի աքսորավայրը: 44.Գյուղ Վրաստանի Մառնեուլիի շրջանում:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 2.Վրինջ: 5.Պալմա: 9.Ուշք: 11.Գլեբ: 12.Ցանկի: 13.Անտեր: 14.Արա: 15.Կաթնով: 19.Կլաուս: 22.Կաշառք: 27.Ակնա: 28.Անցագիր: 32.Կծու: 34.Նիրո: 35.Մոնթե: 37.Հարց: 38.Ունք: 40.Իրար: 41.Գութ: 42.Մեքքա: 44.Ամա: 45.Մարջ: 48.Եվա: 49.Մաքս: 51.Հնոտի: 52.Ուստա: 55.Պեր: 57.Նառա: 59.Կրետե: 61.Գոճի: 64.Յան: 65.Նոտա: 67.Սյուզի: 68.Արաբ: 69.Նեգր: 71.Կիթառ: 74.Աշտե: 75.Ամառ: 76.Դուդուկ: 78.Նարե: 79.Տնկի: 80.Ոսկե: 83.Եզ: 84.Լուի: 86.Դրապ: 89.Մրսեն: 92.Ծաղր: 93.Որ: 94.Անսքող:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Ամյակ: 2.Վանգա: 3.Իշխաս: 4.Ջութակ: 5.Պատառ: 6.Լերկ: 7.Ագաթ: 8.Դեֆո: 10.Քարշ: 16.Ալլա: 17.Ներկա: 18.Վադուց: 20.Լծկան: 21.Ուրան: 23.Այց: 24.Արգո: 25.Քարթու: 26.Չարիք: 29.Նորածին: 30.Ամրակուռ: 31.Ինգա: 33.Ծրար: 36.Եթիմ: 37.Հումք: 39.Քմահաճ: 43.Քասու: 46.Ասպետ: 47.Ջերմ: 50.Արենա: 53.Սայաթ: 54.Ակնառու: 56.Զգոն: 58.Ավիկ: 60.Տոբակո: 62.Իսրայել: 63.Լուսակիր: 66.Արտակ: 70.Երազ: 72.Իբն: 73.Ադիդաս: 77.Դրածո: 78.Ներու: 79.Տրե: 81.Սարդ: 82.Երամ: 85.Ում: 87.Պաղ: 88.Պո: 90.Սա: 91.Նա:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445